

ՀԻՇԱՏԱԿԱԳԻՐ-ԲԱՆԱՍՏԵՎԻՐ

(Ստեփանոս Չմշկածագեցի)

Հ. Գ. ԲԱՆՁԻՆՅԱՆ

Միջնադարի գրիչներից շատերն իրենց ընդօրինակած ձևագիր-գրքերի մեջ՝ տեքստերի վերջում կամ բացատներում թողել են արձակ և շափածո հիշատակարան-հիշատակագրություններ, որոնք վերարտադրում են ձևագրերի գրչության հանդամանքները: Քիչ չեն դեպքերը, երբ այդ կարգի հիշատակարաններում ներկայացվում են ժամանակի ինչ-ինչ անցքերի (հիմնականում ողբերգական) նկարագրությունները, իրենց՝ հիշատակագիրների անձնական վշտերն ու ցավերը, այլև՝ դիրքը պահպանելու և նրա իմաստներին մեջ թափանցելու խրատականները: Այն հիշատակագիրները, որոնք բարձրանալով արձանագրողի մակարդակից, բանաստեղծորեն են շարագրել իրենց հիշատակարանները, համարվում են հիշատակագիր-բանաստեղծներ: Դրանցից մեկն է, ահա, Ստեփանոս Չմշկածագեցին:

Չմշկածագեցու մասին որոշ կենսագրական տվյալներ ենք գտնում իր իսկ հիշատակարանների մեջ: Ծնվել է հավանաբար XV դարի առաջին կեսին: Ծննդավայրը, ինչպես կարելի է ենթադրել մականունից, եղել է Ծովքի Չմշկածագ (Հիերոպոլիս) քաղաքը: Հայրը՝ Կորեյը (Կարեյ) ծագումով ասորի էր, իսկ մայրը՝ Աղմեյիքը՝ հայուհի: Ասորի հայրը, սակայն, որդուն տալիս է հայկական կրթության, հանձնելով նրան Դարանաղյաց գավառի Ավագ վանքը: Ահա թե ինչ է գրում Չմշկածագեցին իր ծնողների մասին.

... Այլ և զհայրն իմ ասորի,
Ու ուղղափառ զործով բարի
Փոխեալ ի տէրն ամէնի՝
Կարելի անուամբն յորշորչի,

Զոր նայ եղեւ պատեառ բարի
Այս ուղղափառ սուրբ կրանի,
Չեզ աղաւթիւմ տէրն ողորմի:
Այլ և զմայրն իմ ճայագղի...¹

Ստեփանոսն ունեցել է եղբայրներ, որոնցից մեկի՝ Պարսամի որդին՝ Հովհաննեսը, սարկավագ էր նույն Ավագ վանքում.

Զեորաւորդիս իմ սիրելի,
Ու Յոհաննէս անուն կոչի,
Նոր ընծայեալ տեառն Յիսուսի...²

Թե որ թվականին է Ստեփանոսը մտել Ավագ վանք, հայտնի չէ: Այստեղ նա աշակերտել է ժամանակի կրթված մարդկանցից մեկին՝ Հովհաննես Համշենցուն (Ամլորդի, Չայն), որը նշանավոր մանկավարժ էր և թի թաղաւորա-

¹ Լ. Խաչիկյան, ժն դարի հայերեն ձևագրերի հիշատակարաններ, հատ. Բ, Երևան, 1958, էջ 210:

² նույն տեղում:

կան ազգէն: նրա ձեռքի տակ սովորել են բազմաթիվ աշակերտներ, որոնցից շատերը հետագայում դառնալով գրիչներ, իրենց հիշատակարաններում Լրախտագիտությանը են մտաբերել սիրելի ուսուցչին: Այդպիսի աշակերտներից է եղել նաև Ստեփանոս Չմշկածագեցին: Նա իր հիշատակարաններում ամենագրվատական խոսքերով է հիշել Համշենցուն, անվանելով նրան «առատաշնորհ երջանիկ բաբունապետ», «Երանեալ աստուածաբան արվիաւորիչ», «քաջ հոնտոր և բանիբուն տելետ», «բազմերախտ հայր» և այլն:

1463 թ. Չմշկածագեցին արդեն արեղա էր: Վանքում Չմշկածագեցին գրադվում է գրչությամբ՝ ի թիվս այլոց աշակից ունենալով իր հղբորորդուն, որը կոկում էր նրա գրանյութը:

Թեև Չմշկածագեցին իր վկայությամբ եղել է մարմնով տկար ու սնանոողջ, բայց բավական բեղմնավոր գրիչ է եղել: 1463 թ. նա ընդօրինակել է Գրիգոր Աստվածաբանի «Առ որս» կոչված ճառերը³: Մեկ տարի անց՝ 1464 թ., նա ավարտել է երկու ձեռագիր, առաջինը մի ժողովածու՝ «Ի իոնիսիոս Արիստոկազացու «Գրութիւնքը»⁵: Չմշկածագեցու գրչությամբ մեզ հայտնի մյուս թվակիր ձեռագիրը ներսև Շնորհալու «Մեկնութիւն Աւետարանին Մատթէոսի» գործն է՝ ընդօրինակված Ավագ վանքում 1486 թ.⁶: Այս ժամանակ նա արդեն հիշվում է վարդապետի աստիճանով: Բ դեպ, ձեռագրի մի մասը Չմշկածագեցին գրել է տվել միաբաններից Թորոս քահանային, որի գրածը ինքը հետո սրբագրել է ու գլխագրել⁷: Լ. Ս. Խաչիկյանը Չմշկածագեցուն է վերագրել նաև Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի № 1193 ձեռագիր Տաղարանը՝ ընդօրինակված 1476 թ.⁸: Հավանաբար նա է գաղափարել նաև Մաշտոցի անվ. Մատենագարանի № 1766 ձեռագիր ժողովածուն, որը օրինակված է XV դարում (թվականն անհայտ է), Ավագ վանքում, Ստեփանոս գրչի կողմից⁹:

Ստեփանոս Չմշկածագեցու գրական ժառանգությունը նրա հիշատակարան-հիշատակագրություններն են, որոնց մեջ աչքի են ընկնում շափածոները: Դրանց մեծ մասի մեջ հիշատակագիրն աղերսում է ընթերցողներին ներողամիտ լինել ձեռագրերի մեջ թույլ տված վրիպակների համար, հիշել իրեն

³ Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենագարան, ձեռ. № 115, հիշատակարանը տե՛ս Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, Ե, էջ 190—193:

⁴ Ձեռագիրը գտնվում է ՍՈՂՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի լենինգրադյան բաժանմունքում, ձեռ. Կ—80, հիշատակարանը տե՛ս Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, Բ, էջ 212—213:

⁵ Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենագարան, ձեռ. № 1309, հիշատակարանը տե՛ս Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, Բ, էջ 206—212:

⁶ Ձեռագիրը գտնվում է Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքում, ձեռ. № 283, հիշատակարանը տե՛ս Ն. Պողոսյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոյ Յակոբեանց, հատ. Բ, Երուսաղեմ, 1967, էջ 103—106, տե՛ս նաև Լ. Խաչիկյան, ՓՅ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հատ. Գ, Երևան, 1967, էջ 92—93:

⁷ Տե՛ս Ն. Պողոսյան, Մայր ցուցակ, Բ, էջ 105:

⁸ Տե՛ս Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, Բ, Առաջարան, էջ XXV-ի ծան., հիշատակարանը տե՛ս էջ 393—396: Հիշատակարանը առաջին անգամ հրատարակել է Բ. Կյուլեսերյանը «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ» աշխատության մեջ (Անթիլիաս, 1939, սյուն 68—72), տե՛ս նաև Ն. Պողոսյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոյ Յակոբեանց, հատ. Գ, Երուսաղեմ, 1969, էջ 315:

⁹ Տե՛ս Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, Գ, էջ 534:

կամ իր մերձավորներին: Նրա խոսքը միշտ հատկանշվում է պարզությամբ ու անկաշկանդությամբ, և անմիջական ու սրտաշարժ է նրա խնդրանքը.

Փցուն գրչիս ի՞նչ բան ասեմ
Կամ հաբկ ղեկեմ քէ յիշեցեմ,
Միայն ի ձեզ եմ ապաստան.
Ձողորմութիւն ձրի շնորհէք:

Նա, որ առաուն է պարզեօք
Ձեզ պարզեք գոր ինչ խնդրէք
Ձիափափ սրտիս ներ կատարէ
Ոսպէս դուր գմբես կատարէ¹⁰:

Նմանօրինակ չափածո կտորներ շատ կարելի է հանդիպել նրա ձևագրերում: Հիշման արժանանալու նման աղաչանքները, որ բնորոշ էին հիշատակագիրներին ընդհանրապես, կապված էին որոշակի հավատալիքների հետ: Միջնադարի հավատացյալի պատկերացմամբ, մարդը մաքրվում է իր մեղքերից ոչ միայն սեփական աղոթքներով, այլև ուրիշների աղոթքների մեջ հիշվելով: Այս է պատճառը, որ Չմշկածագեցին այնքան պաղատանքով խնդրում է ընթերցողին՝ իր աղոթքների մեջ հիշել նաև գրչի անունը.

Ձիմ աղաչեմս դու լսէ,
Որ պաղատիմ՝ ի միտ պահէ,
Ձմեզ ի յաղափրս Բո յիշէ.
Եւ դու սուրհեիս ի Քրիստոսէ¹¹:

Գրիչների հիշատակը իրենց ընդօրինակած ձևագիր գրքերն էին: Այս է պատճառը, որ նրանք ընթերցողներին աղաչում են լավ պահպանել գրանք, չհիշացնել, անգետ մարդկանց ձեռքը չտալ և այլն: Չմշկածագեցին ևս 1486 թ. ընդօրինակած ձեռագրի չափածո հիշատակագրություններից մեկում նման խրատ ու խնդրանք է անում: Նա բարի խրատատուի և Լղբոր նման է խոսում ընթերցողի հետ.

... Այլ և խրեամ տար դու գրիս,
Մաքուր պահէ, բող դու սուրհեիս,
Ճեկնոտ ձեռամ մի՛ աստ հպիս,
Թէ կատարեալ սէր դու ունիս:

Մի՛ հանց բանար, Բան զչափն ի վեր.
Որ մաղթելով խնդրեմ՝ ո՛վ տուր.
Յերակ խնամ տար. իմ բեկեր.
Առ մեզ արա դու եղբար սէր¹²:

Չմշկածագեցին խրատում է ոչ միայն լավ պահպանել ձևագրերը, այլև՝ խորամուխ լինել նրանց բովանդակած իմաստությունների մեջ: Գրեթե իր բոլոր հիշատակարաններում նա գովերգում է իր ընդօրինակած երկերը, խրատում մարդկանց մշտատե կրթությամբ լուսավորել իրենց միտքն ու վգացումները: Այդպիսի մի ուշագրավ հիշատակագրություն է թողել նա 1463 թ. գաղսփարած ձեռագրի մեջ: Առաջին քառատողում բանաստեղծը հիացմունքով զրվատում է ընդօրինակվող երկը.

Գիրս և խորին ծովու նման.
Մածկեսու ի սա գանձ պատուական,
Կալորդ պիտի նարուարբան՝
Առախս բերլ զգանս, որ աստ կան¹³:

¹⁰ Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, Բ, էջ 192:

¹¹ Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, Գ, էջ 95:

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում, Բ, էջ 192:

Ապա խրատում է.

Մի՛ լինիցիս յանձդ ապաստան՝
 Կարձեալ զիտուն զհեզ հարուստան,
 Այլ յուսացիր յաստուածն բան՝
 Յայն. որ աղբիւրն է զիտուրեան:

Կրբեա՛. Եղբա՛յր, մինչ ի վախճան,
 Մաւրեա՛յ զհո միտրդ և զգայարան,
 Որ հասանիս իմաստութեան¹⁴:

Նման խրատականները բնորոշ էին Չմշկածագեցու ժամանակաշրջանի գրականությունը: Հատկանշական է, որ նրա ժամանակակից բանաստեղծ Առաքել Սյունեցին ևս գրել է նման խրատականներ: Դրանցից մեկում, որունի «Բանք սաղմոսիս է պատուական» սկսվածքը, բանաստեղծը ոչ միայն խրատում է ուսումնասեր լինել, այլև հեղինակում ու ծաղրում է բուրժուազական մարդկանց¹⁵: Չմշկածագեցին ևս ձաղկում է շարկամ և գոհակախոս մարդկանց: Իր հիշատակագրություններից մեկի մեջ նա ասում է.

Վաչ անիրաւ մարդոյն եագար,
 Թ՛լ որպիսի կամօք են շար,
 Հսեց բան խօսին, որ անյարմար
 Իւրեանց կորուստ և և խաւար¹⁶:

Ուսումնասեր ու տքնաշան մարդկանց նկատմամբ իր սերն ու համակրանքը Չմշկածագեցին արտահայտել է «Գրութիւնք Դիոնիսեայ Արիոպագացոյ» ձեռագրի շափածո հիշատակարանում: Բավական երկարաշունչ այս հիշատակարանն աչքի է ընկնում որոշակի գեղարվեստականությամբ: Հիշատակարաններին հատուկ ձևով այն սկսվում է սուրբ Երրորդության փառաբանությամբ և ապա ընդօրինակված ստեղծագործության դրվատանքով: Այդ հատվածը, գրված լինելով կանոնիկ ձևերով, գրական առումով սակավարժեք է: Շարունակության մեջ հիշատակագիր-բանաստեղծը երախտագիտությամբ ու ակնածանքով է արտահայտվում Հովհաննես Համշենցու մասին: Վերջինիս ուղղված մեծարական խոսքն այստեղ արտահայտվել է գեղարվեստական ձևով: Համշենցին, ինչպես պատկերավոր կերպով ներկայացնում է բանաստեղծը, անգույ, անդադար աշխատում է «գիտության բուրաստանում».

Հաւաքելով ծաղիկ ծալրի
 Յերբնագունից ներգունակի,
 Եւ կազմելով սետին բարի
 Առ ի յարումն առողջալի¹⁷:

Հիշատակարանի վերջին հատվածը, ուր Չմշկածագեցին ներբողական խոսք է ասում վանքի միաբանների մասին, որոշ վերապահություններով, կարող է դիտվել որպես մի առանձին բանաստեղծություն՝ գրված բավական նուրբ ձաշակով: Շարունակության մեջ գրիչն աղաչում է հիշել իրեն, իր ծնողներին, մերձավորներին և ընդհանրապես ամբողջ ազգին:

¹⁴ Նույն տեղում, էջ 192—193:

¹⁵ Տե՛ս Առաքել Սյունեցի և յուր ընթերցանները (հրատարակեց Մ. Պոտուրյան)՝, Վենետիկ, 1914, էջ 317—320:

¹⁶ Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, Բ, էջ 213:

¹⁷ Նույն տեղում, էջ 206:

Ուշագրությունների և նաև Չմշկածագեցուն վերագրվող Տաղարանի չափածո հիշատակարանը: Եթե նախորդը ներթողական հիշատակարան էր, ապա սա, ըստ էության, մի պատմական ողբ-հիշատակարան է, որ դժբախտաբար մեզ հասել է ոչ ամբողջական վիճակով (ձեռագրից որոշ էջեր են ընկել, որոշ տողեր էլ աղճատվել են):

Հիշատակարանն սկսվում է ողբի տրամադրությամբ, այլազգիների կողմից ավերվող երկիրը ողբալով: Հիշատակագիր-բանաստեղծը ցնցող պատկերներով վերարտադրում է XV դարի 70-ական թթ. հայ իրականությունը, երբ Հայաստանն ասպատակում էին ակ-կոյունլու հորդաները, երբ ժողովուրդը կրում էր հարկերի ծանր լծի տակ, երբ երկրում իշխում էր Ուզուն-Հասանը, որի զորքերը անշուք էին ամեն կողմից, սգի մեջ պահելով ժողովրդին:

Բանաստեղծը ֆրիկյան պարզախոս լեզվով է ներկայացնում նվաճողների անօրեն հարկահանությունը.

Հարկապահանջն յամեն տեղի
Քաշէ ձեծէ զազարս Աբամի,
Խրեղրէ արծար 'ի բետիւր ոսկի,
Յայնմ, որ շուրի փող պրղենի¹⁸:

Հիշատակարանում Չմշկածագեցին մեջ է բերել նաև Վրաստանի առման և ավերման (1476 թ.) պատմությունը, որ լսել է ոմն տանուտեր Կարիճից: Բանաստեղծական երևակայությամբ նա կերտել է բավական կենդանի մի նկարագրություն: Հարյուր հազարանոց բանակով նվաճողները խուժում են Թիֆլիս և անարգել ավերում քաղաքը: Վրաց թագավոր Բագրատն այդ ժամանակ «Լակկտան» էր գնացել, թողնելով «աշխարհն անտիրական»: Ներխուժողների ահից բոլորը փախչում են բերդերն ու անտառները: Թշնամիները գրավում ու կործանում են նաև Գորի բերդաքաղաքը, սպանում ու գերեվարում նրա բնակիչներին, անտառներից դուրս են բշտում փախստականներին և սկսում մի անօրեն նախճիր, որը կենդանի ներկայացնում է հիշատակագիր-բանաստեղծը.

Պարսն արով իողխողէին,
Ձպառա կանայս այլ բեղ ճոսին.
Ձլահանայսն զենուին.
Առեալ զարիւնն բմպլին¹⁹:

Շարունակության մեջ, որը մեզ է հասել աղճատված ձևով, Չմշկածագեցին պատկերել է համաժողովրդական վիշտը: Բարձրական լալիս էին մայրերն ու բույրերը, բայց մարդասպանները այնքան անգութ էին, որ բռնանում էին նրանց զգացմունքների վրա և՛ ձլալ չր տային լալականին²⁰: Երանով բանաստեղծն ավելի օրոշակի է բացահայտել արյունախում թշնամու դաժան բնավորությունը:

Պարզ, անխաշկանդ ու դյուրամատչելի է Չմշկածագեցու խոսքը, որ առհասարակ բնորոշ է միջնադարյան հիշատակագիրներից շատերին: Նրա

¹⁸ Նույն տեղում, էջ 394:

¹⁹ Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, Բ, էջ 395:

²⁰ Նույն տեղում, էջ 396:

չափածո հիշատակարանները թեև մեծ մասամբ միահանգ են, բայց միալար ու միապաղաղ չեն՝ իրենց հուզականությամբ, հանգերի հնչեղությամբ և անբռնազբոս չափածոյի շնորհիվ: Նա գրել է միջնադարի բանաստեղծների ու հիշատակագիրների նախասիրած յամբական երկանդամ ութ վանկանի ոտանավորով:

Այսպիսով ուրեմն, Ստեփանոս Չմշկածագեցին այն շնորհալի գրիչներից է, որոնք ոչ միայն արտագրել են այլոց ստեղծագործությունները, այլև՝ կարողության սահմաններում, բանաստեղծել են, ասել են իրենց սեփական խոսքը, արտահայտել իրենց խոհերն ու զգացմունքները:

СТЕПАНОС ЧМШКАЦАГЕЦИ

Г. Г. БАХЧИНЯН

(Резюме)

Степанос Чмшкацагечи является одним из известных армянских писцов XV в. Всю свою жизнь он служил в монастыре Аваг, в области Даранахи. Здесь он получил образование у видного педагога и духовного деятеля того времени — Ованеса Хамшенци. В монастыре Чмшкацагечи переписал множество рукописей, к которым оставил свои колофоны (приписки, памятные записи) в стихах. Иногда в них писец обращается к читателям, советуя беречь рукописи, проникать в смысл книг, обогащать разум и чувства. Особенно интересен колофон, который Чмшкацагечи записал в рукописи 1464 года. Художественными чертами выделяется также элегический колофон рукописи 1476 г., в котором поэт-писец мрачными красками описывает тяжелое состояние армян и грузин под жестоким игом иноземных захватчиков. Колофонам Чмшкацагечи характерна эмоциональность, ясность речи и правильность стихосложения.